# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՋՐԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Ջրաշեն համայնքի ղեկավարի 23.01.2017թ. թիվ 3 ,4 և 5 որոշումները և համայնքի ավագանու 23.01.2017թ. թիվ 1-Ն ,2-Ն և 3 որոշումները:

Առդիր 7 թերթ:

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(0255)6-03-23

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվար 2017 թվականի N 3

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ (ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱՍԻ) ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 49-րդ հոդվածի և ղեկավարվելով համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 23-ի թիվ 2-Ն որոշմամբ հաստատել համայնքի 2017թ. բյուջեի ծախսային (ելքային մասի) եռամսյակային բաշխումը՝ համաձայն հավելված 1-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(0255)6-03-23

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվար 2017 թվականի N 4

## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ (ԵԼՔԱՅԻՆ ՄԱՍԻ) ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 49-րդ հոդվածի և ղեկավարվելով համայնքի ավագանու 2017 թվականի հունվարի 23-ի թիվ 2-Ն որոշմամբ հաստատել համայնքի 2017թ. բյուջեի ծախսային (ելքային մասի) եռամսյակային բաշխումը՝ համաձայն հավելված 2-ի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք,
հեռ.(0255)6-03-23


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«23» հունվարի 2017 թվականի N 5

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 24 -ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ջրաշեն համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 4-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Որոշում եմ

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՈՒՌՈՒՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Ջրաշեն համայնքի ղեկավարի
2017 թվականի հունվարի 23-ի N 5 որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Զաքարյան Գայանե Գնելի - 20.0 հազար դրամ:(համայնքում ծննդաբերությունը խրախուսելու նպատակով)
2.Գասպարյան Քնքուշ Հովհաննեսի -20.0 հազար դրամ:(համայնքում ծննդաբերությունը խրախուսելու նպատակով)
3.Զարզարյան Գոհարիկ Դանիելի -20.0 հազար դրամ: (համայնքում ծննդաբերությունը խրախուսելու նպատակով)

4.Մկրտչյան Սվետլաննա Արտաշի - 20.0 հազար դրամ (սոց.օգնություն)

5.Սաֆարյան Նինա Գառնիկի - 100.0 հազար դրամ (հուղարկավորման ծախս)

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 180.0 հազար դրամ:

ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

«23» հունվարի 2017 թ. N 1 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Ջրաշեն համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ջրաշեն գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 28-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | | | |
| 2.Ջավեն Տոնիկյան | | | |
| 3.Կարապետ Ռուռսյան | | | |
| 4.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 5.Մացակ Ռուռսյան | | | |
| 6.Ժորա Մկրտչյան | | | |
| 7.Սպարտակ Թումասյան | | | |
| 8.Բենիկ Զարգարյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
Էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » հունվարի 2017 թվականի N 2 -Ն

### ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի « ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 29 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Ջրաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Ջրաշեն համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի « Ջրաշեն համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 29-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | | | |
| 2.Զավեն Տոնիկյան | | | |
| 3.Կարապետ Ռուռսյան | | | |
| 4.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 5.Մացակ Ռուռսյան | | | |
| 6.Ժորա Մկրտչյան | | | |
| 7.Սպարտակ Թումասյան | | | |
| 8.Բենիկ Զարգարյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ջրաշեն համայնք, հասցե գ.Ջրաշեն
հեռ. (0255) 6-03-23
էլ.Փոստ՝ jrashen.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2017 թվականի N 3

## ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1 կետի բ ենթակետի՝

Ջրաշեն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ջրաշենի համայնքի ղեկավարի վարձատրության չափը,համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 25 նոյեմբերի 2016 թվականի թիվ 26 որոշումը:
3. Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ պաշտոն զբաղեցնող Անաստաս Հակոբյանին վճարել 5%-ի չափով հավելավճար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| Համայնքի ավագանու անդամներ՝ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| 1.Հուսիկ Թովմասյան | | | |
| 2.Զավեն Տոնիկյան | | | |
| 3.Կարապետ Ռուռույան | | | |
| 4.Հրաչյա Հովհաննիսյան | | | |
| 5.Մացակ Ռուռույան | | | |
| 6.Ժորա Մկրտչյան | | | |
| 7.Սպարտակ Թումասյան | | | |
| 8.Բենիկ Զարգարյան | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՌՈՒՌՈՒՅԱՆ